


ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌԱՎԱՐԵԼԻ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ
ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
2012-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐ

Պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Լոռու մարզում դիտվում է մեկ տարեկան երեխաների ամբողջական ընդգրկվածության ցուցանիշների նվազում:



Գծապատկեր 1՝ 2012-2019թթ. կանխարգելիչ պատվաստումներում ամբողջական ընդգրկվածության ցուցանիշները Լոռու մարզում, %


Պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Լոռու մարզում 2019 թվականին 2018 թվականի համեմատությամբ դիտվել է ցուցանիշների նվազում: 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը նվազել է 1,4%-ով և կազմել է 91,9%, 2 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունը աճել է 0,2%-ով՝ կազմելով 95,9%, իսկ 6 տարեկանների ընդգրկվածությունը նվազել է 0,3%-ով՝ կազմելով 97,9%: 2019 թվականին 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածության առավել ցածր ցուցանիշ է արձանագրվել «Ճոճկանի ԲԱ» ՀՈԱԿ-ում (68,4%), «Զրաշենի ԲԱ» ՀՈԱԿ-ում (78,8%) և «Ախթալայի ԱԿ» ՊՓԲԸ-ում (81,8%), (Աղյուսակ 2):

Առողջապահության նախարարությունում ցուցանիշների բարելավման նպատակով կազմակերպված քննարկումից հետո մարզում 2019թ. դեկտեմբերին դիտվել է

ցուցանիշների որոշակի բարելավում օգոստոս ամսվա համեմատությամբ, մասնավորապես 1 տարեկանների ընդգրկվածությունը նվազել է 0,6%-ով և կազմել 91.9%, 2 տարեկանների ընդգրկվածությունը աճել է 0,1%-ով և կազմել 95,9%:

Հանրապետության ողջ տարածքում հատկապես ցածր է մեծահասակ ազգաբնակչության ԱԴՓ-Մ պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշները՝ 33,8%, իսկ Լոռու մարզում՝ 14,4%:

Ստորև ներկայացվում է պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի:



Գծապատկեր 2՝ 2019թ. Լոռու մարզում կանխարգելիչ պատվաստումներից հրաժարումներն՝ ըստ առանձին պատվաստանյութերի